ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

23.01.2019
341-02

Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Մարության,

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք 49-րդ հոդվածի համաձայն՝ Քաղաքապետի կարգադրությունները մեկշաբաթյա ժամկետում ենթակա են հրապարակման քաղաքապետարանի պաշտոնական կայքում:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել 2018թ.-ի սեպտեմբերից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում Երևանի քաղաքապետի կողմից պարգևատրված աշխատակիցների ցանկը՝ նշելով յուրաքանչյուրին տրված պարգևավճարի չափը:

Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան